

1.	31.03.10	141-Ն	ԼՂՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին	mi sarg vorishum
----	----------	-------	---	----------------------------------



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2003թ.
332

N

ք.Ստեփանակերտ

**Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների
պետական գրանցման և հաշվառման կարգը սահմանելու մասին**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետին և 19-րդ հոդվածին համապատասխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

Սահմանել ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցման և հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ վարչապետ

Ա.Դանիելյան

Կ Ա Ր Գ

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցման և հաշվառման

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց (այդ թվում՝ օտարերկրյա) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ ընդերքօգտագործողներ) կողմից կատարվող ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցման և հաշվառման գործընթացը:

2. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցումն ու հաշվառումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ վարչություն):

3. Վարչությունը 10-օրյա ժամկետում կատարում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի առկայության դեպքում:

4. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները գրանցվում են գրանցամատյանում, և ընդերքօգտագործողին տրամադրվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն ձևի (կցվում է):

5. Ընդերքօգտագործողներն ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների մասին ամփոփ տեղեկատվությունը (հաշվետվություն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում են վարչություն՝ հաշվառման:

6. Վարչությունն ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարելու համար ընդերքօգտագործողին տրամադրում է տեղեկատվություն տվյալ տեղամասի ուսումնասիրության աստիճանի մասին:

7. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցումը կատարվում է մեկ անգամ:

8. Ընդերքօգտագործողի կազմակերպարավական կարգավիճակի, երկրաբանական ուսումնասիրության ձևի և կատարվող ծրագրի փոփոխությունների դեպքում, ընդերքօգտագործողի դիմումի հիման վրա, աշխատանքը վերագրանցվում է:

9. Ընդերքօգտագործողների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մասին հաշվետվությունների յուրաքանչյուր հատորի տիտղոսաթերթի վրա պետք է նշված լինի պետական գրանցման համարը:

10. Վարչությունը կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնող անձանց տալիս է տեղեկանք-ժանուցագրեր հաշվետվության ընդունման մասին:

11. Պետական գրանցումից հետո կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքները ենթակա են հաշվառման՝ գրանցամատյանում:

12. Հաշվառման վերջված փաստաթղթերը երկրաբանական ֆոնդում պահպանվում են անժամկետ:

13. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները գրանցվում ու նյութերը հաշվառվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության
աշխատանքների պետական գրանցման մասին
N _____

Վարչությունը _____

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, որոնք ներառված են

_____ 200 թ. _____ -ի « _____ »
(ընդերքագրության հայտը և դիմելու օրը, ամիսը, տարեթիվը)

Կազմակերպությունը (քաղաքագին) _____
որոշմամբ: _____
Ելից համարը _____ 200 թ.
Կողմից: _____
Գտնվելու վայրը _____

աշխատանքային ծրագրում հաստատված _____
Աշխատանքները ֆինանսավորվում են _____
(ում կողմից է հաստատված, անունը, ազգանունը)
Բանկի անվանումը _____
(բանկի գրասենյակի անվանումը)

NN ը/կ	Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ձևը	Օգտակար հանածոյի տեսակը	Աշխատանքի օբյեկտի անվանումը (թեման)	Աշխատանքի օբյեկտի տեղագրության վայրը (շրջանը, մակերեսը աշխարհ. կոորդինատները)	Երկրաբանական առաջադրանքի ֆիզիկական ծավալները	Աշխատանքների կատարման ժամկետները (եռամսյակ, տարի)		Աշխատանքների նախագծային արժեքը (հազ. դրամ)	Ծանոթ- ություն
						սկիզբը	ավարտը		
1	2	3	4	5	6	7	8	9	10

Երկրաբանական կազմակերպության ղեկավար _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

- Երկրաբանական ուսումնասիրության արդյունքները երկրաբանական ֆոնդում`
- աշխատանքներ, որոնք նշված են 7-րդ սյունակում, գրանցված են „ _____ „ _____ 200 թ., ըստ գրանցամատյանի _____
 - աշխատանքներ, որոնք նշված են 2-րդ սյունակում, գրանցման ենթակա չեն _____ պատճառով
(նշել պատճառը)
 - աշխատանքներ, որոնք նշված են 2-րդ սյունակում, գրանցումը մերժված է _____ պատճառով
(մերժման պատճառը)

ԼՂՏ շրջակա միջավայրի և բնական
ռեսուրսների վարչության պետ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)